ՆՈՐԻ՛Ն ՎԵՀԱՓԱՌՈՒԹԻՒՆ

ՏԷՐ ՏԷՐ

ՄԿՐՏԻՉ ԿԱԹՈՂԻԿՈՍ

ԵՒ

ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ.

Ամսիս 12-*ին, Սրբոյն Գրիգորի Լուսաւորչին մերոյ Նշխարաց Գիւտի տօնախմբութեան հանդիսաւոր աւուր երեկոյեան ստացուեց Մայր Աթոռումս աւետաբեր հեռագիրը, որով պաշտօնապէս հաղորդւում էր* ՕԳՈՍՏԱՓԱՌ ԿԱՅՍԵՐ *բարձրագոյն հաճութիւնը և վաւերացումը* ՆՈՐԻ՛Ն ՎԵՀԱՓԱՌՈՒԹԵԱ՛Ն Տ. Տ. ՄԿՐՏԻՉ ԱՄԵ՛ՆԱՅ՛Ն ՀԱՅՈՑ Ա.ՕԳՐԱ՛ՆՏԻՐ ԿԱԹՈՒՂԻԿՈՍԻ՝ *անցեալ տարուայ մայիսին կատարուած ընտրութեան։*

Բազմաթիւ պետութեանց մէջ բնակուող և ի սփիւռս աշխարհաց տարածուած Հայ եկեղեցու—Ազգի երկարատև և ակնկառոյց ակնկալութիւնը ստացաւ յաջողապէս իւր լրումն ու պսակը։ Նոյն գիշերն և եթ հեռագրով պատուէր ուղարկուեց բոլոր հայ եկեղեցիներում՝ Տաճկաստան, Ռուսաստան, Պարսկաստան—Հնդկաստան և այլուր՝ հանդիսաւոր մաղթանք և պատարագ մատուցանել, յիշատակելով Նորընտիր Կաթուղիկոսի սրբազնեալ անունը։ Մայր-Ա-

թոռիս Տաճարում, աւագ-սեղանի վրայ ա-
պատարագ մատուցուեց ամսիս 13-ին, կի-
րակի օրը, ամբողջ Միաբանութեան, Հե-
մարանի սաների և խուռն բազմութեան ներ-
կայութեամբ: Պատարագիչն էր Գերապ.
Երիստակէս եպիսկոպոս Սեդրակեան: Ամե-
նեքեան հոգեզմայլութեամբ լսեցին ամենա-
սիրեցեալ և ժողովրդական Հայրապետի
պաշտելի անուան առաջին յիշատակու-
թիւնը, որի ժամանակ վեր առնուեց Հայ-
րապետական Գահի վրայից սև քողը:
Վանքիս Սեղանատանը հանդիսաւոր ճաշ-
կերոյթ էր: Երեկոյեան տօնական հրաւա-
ռութիւն և ճրագալոյց: Ընդհանուր ոգևո-
րութիւնը, բարեմաղթութիւնները, անկեղծ
և անսահման ուրախութիւնը, բազմա-
խուռն ժողովրդեան կեցցէներն ու հրճու-
անքը յիշեցնում էին մեզ անցեալ տարուայ
սա միշտ անմոռանալի մայիսի 5-ը, երբ
միաձայն և միահամուռ համազգային քուէ-
ներով Խրիմեան Հայրիկը Ամենայն Հայոց
Կաթուղիկոս ընտրուեց: Ինչ միաձնից անյա-
պաղ դէպի Երուսաղէմ կուղարկուի հրա-
իրակ Պատգամաւորութիւն՝ Նորին Վեհ-
ափառութիւնը դէպի Աստ-Աթոռս առաջ-
նորդելու համար: Մեզ մնում է բարեմաղ-
թել Նորին Վեհափառութեան համար
երկար կեանք ի փառս Եկեղեցու և յօգուտ
Ազգի, իսկ մեզ համար՝ բարեբաղդութիւն՝
Միածնաէջ Տաճարում Նորին Վեհափա-
ռութեան Սուրբ Օծութեանը հանդիսատես
լինելու: